ՀՀ ԱԻՆ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ ՀԻՄՈՒՆՔՈՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՈՒՍՄԱՆ ՎՃԱՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ

ԵՐԵՎԱՆ-2022

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
ՈՐՈՇՄԱՄԲ ԱՐՁ. № 2, ԿԱՅԱՑԱԾ 15.04.2022 Թ.
ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝
_____Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ ՀԻՄՈՒՆՔՈՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՈՒՍՄԱՆ ՎՃԱՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայում (այսուհետև՝ Ակադեմիա) բակալավրի կրթական ծրագրի առկա ուսուցման վճարովի հիմունքով սովորողների ուսման վճարի փոխհատուցման հետ կապված հարաբերությունները:
2. Սույն կանոնակարգը սահմանում է Ակադեմիայի առկա ուսուցման վճարովի հիմունքով սովորողների ուսման վճարի փոխհատուցման տարակարգերը, չափը և փոխհատուցման կարգը:
3. Ուսման վճարի փոխհատուցման մասին դիմումները Ակադեմիայի ռեկտորատի քննարկմանը կարող են ներկայացնել սույն կանոնակարգի **II**-ում նշված տարակարգերի սոցիալական ծանր պայմաններում գտնվող այն ուսանողները, ովքեր նախորդ կիսամյակում ունեցել են բարձր առաջադիմություն, չեն օգտվել որևէ քննության (ստուգարքի) վերահանձնման իրավունքից և չեն ստացել կարգապահական տույժեր:

Եթե ուսանողն իր կարգավիճակով համապատասխանում է սույն կանոնակարգի **II**-ով սահմանված մի քանի տարակարգերի, ապա նա կարող է հավակնել դրանցից միայն մեկին:

II. ՈՒՍՄԱՆ ՎՃԱՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՏԱՐԱԿԱՐԳԵՐԸ ԵՎ ՉԱՓԸ

- միակողմանի ծնողազուրկ ուսանողներ՝ 15%,
- մինչև մեկ տարեկան երեխա ունեցող ուսանողներ՝ 10%.
- երեք և ավելի անչափահաս երեխաներ ունեցող ընտանիքների ուսանողներ՝ 15%,
- Ակադեմիայում բակալավրի կրթական ծրագրի առկա ուսուցման վճարովի համակարգում երկու և ավելի ուսանողներ ունեցող ընտանիքների յուրաքանչյուր ուսանող՝ 10%,
- սոցիալապես անապահով այլ տարակարգեր (փախստականներ, 1-ին կամ 2-րդ կարգի հաշմանդամ ծնողներ ունեցող և այլն) ունեցող ուսանողներ՝ 10%:

III. ՈՒՍՄԱՆ ՎՃԱՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ

4. Ուսման վճարի փոխհատուցման մասին դիմումները ներկայացվում են յուրաքանչյուր ուսումնական տարվա.
   - առաջին կիսամյակի համար՝ սեպտեմբերի 1-ից 25-ը,
   - երկրորդ կիսամյակի համար՝ փետրվարի 10-ից մարտի 5-ը:
5. Ուսման վճարի փոխհատուցման մասին դիմումները

քննարկվում են յուրաքանչյուր ուսումնական տարվա.

- առաջին կիսամյակի համար՝ սեպտեմբերի 1-ից 30-ը,
- երկրորդ կիսամյակի համար՝ փետրվարի 10-ից մարտի 10-ը:

6. Ուսման վճարի փոխհատուցումը վերաբերում է միայն տվյալ կիսամյակին:
7. Առաջին կուրսի սովորողների ուսման վճարի փոխհատուցումները դիտարկվում են առաջին կիսամյակի ավարտից հետո:
8. Վերականգնվող կամ տեղափոխվող սովորողները կարող են դիմել ուսման վճարի փոխհատուցման համար առնվազն մեկ կիսամյակ սովորելուց հետո:
9. Ուսման վճարի փոխհատուցման մասին դիմումին կից ներկայացվում են.
   - փաստաթուղթ սովորողի և նրա ընտանիքի կարգավիճակի մասին.
   - սովորողի առողջական, սոցիալական վիճակը հաստատող փաստաթղթեր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. Ընդհանուր դրույթներ..... 3

II. Ուսման վճարի փոխհատուցման տարակարգերը և չափը 4

III. Ուսման վճարի փոխհատուցման կարգը 4